

**«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ՄԻՋԻՆ ՔԻԶՆԵՍԻ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ
«ՕՎԵՐԴՐԱՖՏ» ՎԱՐԿԱՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո
Տարեկան տոկոսադրույք	Լողացող* կամ հաստատուն, ելնելով Հաճախորդի տեսակից և ֆինանսավորման արժույթից՝ Բանկի կողմից սահմանված ֆոնդավորման դրույքի հիման վրա:
Ժամկետ	մինչև 1 տարի
Օվերդրաֆտի սահմանաչափ	Օվերդրաֆտի սահմանաչափի հաշվարկը կատարվում է Բանկի կողմից՝ ելնելով հաշիվների միջին օրական մնացորդից, զուտ միջին ամսական շրջանառությունից և Հաճախորդի վարկանիշից:
Վարկառուներին ներկայացվող հիմնական պահանջները	<ol style="list-style-type: none"> 1. Բանկում և/կամ այլ բանկում/վարկային կազմակերպություններում բացասական վարկային պատմության բացակայություն; 2. Կայուն ֆինանսական վիճակ վերջին 4 եռամսյակում (առկայության դեպքում), հաշվի առնելով գործունեության սեզոնայնությունը և առանձնահատկությունները, վճարունակության, վարկային պատմության մարման առաջնային աղբյուրների առկայություն; 3. Բանկի հետ փոխկապակցված վարկառուների խմբի մոտ Բանկում և/կամ այլ բանկերում ժամկետանց պարտավորությունների բացակայություն; 4. Վերջին 3 օրացուցային ամիսների ընթացքում Բանկում առկա հաշիվներին (յուրաքանչյուր հաշիվ, որին առկա դրամական միջոցները հաշվի են առնվում օվերդրաֆտի սահմանաչափի հաշվարկում) ամսական ոչ պակաս, քան 1 անգամ նվազագույն քանակի մուտքագրումների առկայություն; 5. Հաճախորդի նկատմամբ ներկայացված քաղաքացիական և վարչական հայցերի կամ հաճախորդներին սնանկ կամ անվճարունակ ճանաչելու հայցի բացակայություն; 6. Գործող արտոնագրի առկայություն (այն դեպքում, երբ գործունեությունը պահանջում է արտոնագրում); 7. Հաճախորդի կողմից պահանջվող դրամական միջոցների օգտագործման նպատակը չպետք է կապված լինի մոլախաղերի հետ (մոլախաղային մեքենաներ, խաղատներ և այլն); 8. Օֆշորային գոտիներում գրանցված բանկերի կամ կազմակերպությունների հետ գործնական կապերի առկայության դեպքում որոշումների կայացման կենտրոնը ՀՀ տարածքն է, տարեկան համախառն հասույթի 50% և ավելին ապահովվում է ՀՀ տարածքում իրականացվող գործունեության հաշվին, ինչպես նաև պահանջվող ֆինանսավորման օգտագործումն իրականացվում է ՀՀ տարածքում:
Օվերդրաֆտի նպատակը	<ul style="list-style-type: none"> • Դրամական միջոցների նկատմամբ անհետաձգելի ընթացիկ (կարճաժամկետ) պահանջի բավարարում; • Կարճաժամկետ դրամարկղային ճեղքվածքի ծածկում; • Այլ նպատակով՝ համաձայն Բանկի Վարկային կոմիտեի որոշման:

<p align="center">Հիմնական պարտավորության և հաշվեգրված տոկոսագումարների մարման պայմաններ</p>	<ul style="list-style-type: none"> • Օվերդրաֆտի գծով պարտավորության ամենօրյա մարում (հիմնական պարտավորություն, հաշվեգրված տոկոսներ և չօգտագործված մասի միջնորդավճար): • հաշվեգրված տոկոսների և չօգտագործված մասի միջնորդավճարի ամենամսյա մարում, հիմնական պարտավորության ամենօրյա մարում: • պարտավորության ամենամսյա մարում (հիմնական պարտավորություն, հաշվեգրված տոկոսներ և չօգտագործված մասի միջնորդավճար (վարկի տրամադրման օրվանից ոչ ուշ, քան 30 (երեսուն) օրացուցային օրը մեկ, եթե հրավասու մարմնի կողմից այլ ժամկետ նշված չէ):
<p align="center">Օվերդրաֆտի տրամադրման միանվագ վճար</p>	<p align="center">օվերդրաֆտի գումարի 0.3% չափով, նվազագույն գումար – 10,000 ՀՀ դրամ առավելագույն գումար – 500,000 ՀՀ դրամ</p>
<p align="center">Վերջնական օֆերտայից հրաժարվելու տուգանք</p>	<p align="center">Օվերդրաֆտի գումարի 0.15% <i>(Տուգանքը գանձվում է վերջնական օֆերտայի հիման վրա և առկայության դեպքում (ստորագրվում է Բանկի և Հաճախորդի միջև տվյալ վարկային գործարքը Բանկի Վարկային Կոմիտեի կողմից հաստատվելուց հետո))</i></p>
<p align="center">Ժամկետանց հիմնական պարտավորության մասի նկատմամբ կիրառվող տույժ</p>	<p align="center">0.1 % օրական</p>
<p align="center">Ժամկետանց տոկոսների նկատմամբ կիրառվող տույժ*</p>	<p align="center">0.1 % օրական</p>
<p>*Պայմանագրով հաշվարկվող տուժանքների (տույժերի և տուգանքների) չափը չի կարող գերազանցել գանձման ժամանակ ՀՀ օրենսդրությամբ սահմանված սահմանաչափը:</p>	
<p align="center">Օվերդրաֆտի չօգտագործված մասի նկատմամբ կիրառվող տոկոս</p>	<p align="center">1 % տարեկան</p>
<p align="center">Օվերդրաֆտի ոչ նպատակային օգտագործման համար միանվագ տուգանք</p>	<p align="center">Ոչ նպատակային օգտագործված գումարի 5% չափով</p>
<p align="center">Ֆինանսավորման եղանակը</p>	<p align="center">Անկանխիկ</p>
<p align="center">Վարկային պայմանագրով սահմանված օգտագործման եղանակի խախտման համար տուգանք</p>	<p align="center">Օգտագործման եղանակի խախտմամբ օգտագործված գումարի 5% չափով, միանվագ</p>
<p align="center">Մոնիտորինգի պայմանների չկատարման տուգանք</p>	<p align="center">1% վարկային միջոցների մնացորդից միանվագ, բայց ոչ ավելի, քան 2,000,000 ՀՀ դրամ</p>

<p>Վարկային գործարքի սպասարկման (պայմանների փոփոխության) վճար</p>	<p>. Վարկային գործարքի ցանկացած պայմանի (այդ թվում՝ գրավի մասով, բացառությամբ հաջորդող գրավի թույլտվության) փոփոխության դեպքում 100,000 ՀՀ դրամ միանվագ յուրաքանչյուր հայտի համար:</p> <p>. Վարկային գործարքի պայմանների էական (հիմնական)** փոփոխությունների դեպքում՝ Օվերդրաֆտի մնացորդի (եթե Օվերդրաֆտի սահմանաչափի օգտագործման ժամկետը սպառվել է, համաձայն վարկային փաստաթղթերի) կամ Օվերդրաֆտի (եթե Օվերդրաֆտի սահմանաչափի օգտագործման ժամկետը չի սպառվել, համաձայն վարկային փաստաթղթերի) 0.2% չափով, բայց ոչ պակաս, քան 100,000 ՀՀ դրամ և ոչ ավելի, քան 1,000,000 ՀՀ դրամ: Վճարը գանձվում է միանվագ, յուրաքանչյուր հայտի համար:</p>
<p>* Լողացող տոկոսադրույքով գործող օվերդրաֆտների տոկոսների վերանայումը իրականացվում է եռամսյակը մեկ անգամ:</p>	
	<p>** Վարկային գործարքի պայմանների էական (հիմնական) փոփոխություններ են համարվում հետևյալ փոփոխությունները</p> <ul style="list-style-type: none"> . Տոկոսադրույքի իջեցում; . Գործարքի ընդհանուր ժամկետի փոփոխություն; . Օվերդրաֆտի սահմանաչափի ավելացում***; . Գործարքի նպատակի (նպատակային օգտագործման ձևակերպման) փոփոխություն (վարկի սահմանաչափի շրջանակներում միանգամյա գործարքի նպատակի փոփոխության դեպքում կիրառվում է 100,000 ՀՀ դրամ միանվագ միջնորդավճարը յուրաքանչյուր հայտի համար): <p>*** Օվերդրաֆտի սահմանաչափի ավելացման դեպքում միանվագ վճարը հաշվարկվում է լրացուցիչ (ավելացվող) սահմանաչափից:</p>